# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-26/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

| | |
|---|---|
| ք. Երևան | «03» մարտի 2026թ.<br>Ժամը՝ 11:30 |

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-26/02» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (27.02.2026թ.)՝ ժամը 11:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 02.03.2026թ.՝ ժամը 11:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնման գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գները.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (առավելագույն) /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Տպագրական և առաքման ծառայություններ | 114720 |
| 2 | Տպագրական և առաքման ծառայություններ | 1859760 |

**3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|
| Լիմուշ ՍՊԸ | ք. Երևան, 0096, Դավիթ Մալյան փ. 45/3 շենք |
| Դավիթ Քոչարյան ԱՁ | Երևան, Արգիշտի փ, շ 11/3 բն 32 |
| Մոնոպրինտ ՍՊԸ | ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա Անդրանիկի փ 96 8բն. |
| ՄՌԱՎ ՊՐԻՆՏ ՍՊԸ | Ջրվեժ, գ. Ձորաղբյուր 99 թաղ, 41 |

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-26/02» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը (անունը) | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | |
| 1 | Լիմուշ ՍՊԸ | 114720 | 20% | 137664 | 92652 | 20% | 111182.40 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դավիթ Քոչարյան ԱՁ | 95520 | 20% | 114624 | 93608 | 20% | 112329.60 | |
| 1 | Մոնոպրինտ ՍՊԸ | 200000 | 20% | 240000 | 200000 | 20% | 240000.00 | Մերժված |
| 2 | Լիմուշ ՍՊԸ | 1859760 | 20% | 2231712 | 1255000 | 20% | 1506000.00 | |
| 2 | Դավիթ Քոչարյան ԱՁ | 1549390 | 20% | 1859268 | 1434500 | 20% | 1721400.00 | |
| 2 | ՄՌԱՎ ՊՐԻՆՏ ՍՊԸ | 1549799.8 | 20% | 1859759.76 | 1450000 | 20% | 1740000.00 | |
| 2 | Մոնոպրինտ ՍՊԸ | 2000000 | 20% | 2400000 | 2000000 | 20% | 2400000.00 | Մերժված |

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 02.03.2026թ.՝ ժամը 11:30-ին և 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով Լիմուշ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

**7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

Լիմուշ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.**

Լիմուշ ՍՊԸ-ի հայտով ներկայացված՝

- էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություններում առկա են հրավերով պահանջվող տեղեկատվությունները (էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ),
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

**Հանձնաժողովը որոշեց.**

Լիմուշ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտերի վերաբերյալ.**

**9.1.** Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

**- 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով Լիմուշ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,**

- 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով Համակարգի կողմից մերժված չհամարված մյուս մասնակիցների հայտերը մերժել:

**9.2.** 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով այն մասնակիցների հայտերը, ում կողմից աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների համար գնման հայտով սահմանված գնման գները, Համակարգի կողմից համարվել են մերժված:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**10. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան